վարդեակ, մէջտեղում կապոյտ դաշտի վերայ ութ ճառագայթանի աստղ, իսկ սրա կեդրոնում կարմիր գնդակ. հիւսուածքը շրջապատուած է, իբար կպած, չզարդացած արմաւենիկի շարքով, երկու կարմիր գծերի մէջ առնուած։ Այս մեծ վարդեակի երկու կողմից մի մի զոյգ, դարձեալ հիւսուած, աւելի փոքր բոլորակներ, ոսկի դաշտի վերայ՝ կապոյտ գծով, սպիտակով երկուսի բաժանուած։ Իբրև շրջանակ բոլորի՝ քառանկիւնների շարք է, մէջը ձուաձևից կազմուած խաչազարդով։ Ճակատին և անկիւններին բուսական զարդ։ Լուսանցքի զարդը՝ արմաւենիկի, եռատերեւի, քառագնդակների, մէջք մէջքի փակագծի կողերից կազմուած գաւազան է, գեղեցիկ խաչով և գլխին լուսնեղջիւրով. մանրանկարչական տառերը հիւսուածքի և բուսական մոտիւներից կազմուած։ Ամբողջ զարդի մեծութիւնն է գրերի հետ միասին 30 × 22 սմ., քառանկիւնի խորանը միայն 17,50 × 10,50 սմ.։

Ղուկասի սկզբնազարդի ճակատը նոյնպէս քառանկիւնի է (պատկ. 4), վերևի անկիւններում և գագաթում հնգատերեւի զարդով. տերևների բաժանման անկիւններում կարմիր գնդակներով։ Խորանի կեդրոնը՝ սովորական լիւնետի փոխարէն՝ մի եռանկիւնի է, սուր կողմով դէպի վեր ուղղուած, երկու կողերը լայն ժապաւ-

Պատկեր 4